# ԽՐԻՄԻ ՀՆՁԵԱԿՆԵՐ

(Ադամ Միցկեւիչից)

## ԲԱՂՉԵՍԱՐԱՅԸ

Մեծ է խաների ապարանքը դեռ, բայց թափո՛ւր, տրտո՛ւմ.
Գաւիթ ու սրահներ խրոխտ փաշաների ճակատն է սրբել
Սիրոյ ապաստան, փառքի գահ, թախտեր օձն է փաթաթում
Եւ նրանց վրայից մորեխն է ոստնում ազատ, անարգել։

Ճամուկ, գոյնըզգոյն լուսամուտներ՚ից բաղեղն անխափան
Հի՛ն, խո՛ւլ պատերի, կամարների վրայ սողալով արագ,
Մարդկային ջանքի արդիւնքն է ծածկում յանուն բընութեան
Եւ Բաղդասարի ահարկու խօսքով գըրում՝ «ա ւ ե ր ա կ»։

Դահլիճի մէջտեղ շըքեղ մարմարից կերտուած է աման.
Այդ կանանոցի շատրուանն է. նա այժմ էլ է կանգուն
Եւ այս խուլ վայրում, արցունք թափելով մարգարտանըման,

Ասում է տըխուր. ո՞ւր էք դուք, ո՛ սէր, փառք ու մեծութիւն.
Դուք կ'ապրիք յաւէտ. հեղեղն է վազում խրոխտ ու մոլեգնած,
Ո՛, ի՛նչ նախատինք. դուք անցաք վաղուց, հեղեղը մընաց։

*ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ*